

քըն ալն եղաւ, որ նրա հետ անկարող է հաւա-
սարեւ մինչև անգամ մօնսինեօր Գիւպանուն, էջ 4—

Բուրորովին անհասկանալի են հետեեալ պարբերութիւն-
ները. «Վենետիկ վերադառնալով, Գալացցին շարունակեց
ժողովրդին ամենավճուական կերպով համոզել, Սրբեմն նա
ալն տեղ արմատական կուսակցութեան օրգան
էր, որ կազմակերպած էր Վոդոզովրդակա ա-
կումբն անուանով, բալց չափաւոր մարդիկ, ո-
րոնք դեռ դարձեալ լոյս ունէին օրինական
միջոցներով օգտուել՝ դտան, որ Գալացցու քա-
րօզները չափից դուրս լանդուդն են և սթարե-
կարգութեան կոմիտեարն ոչ միայն արգելեց նրան քարոզել,
ալլ մինչև անգամ խնդրեց հեռանալ Վենետիկից» էջ 6—

«Սրանից անկախ—Գալացցու քարոզների մէջ
գործերի դրութեան մասին լուսաւոր հալեացք-
ներ և ալդ գործերին ընդհանուր բարոյակա-
նութեան պահանջներ լարմարեցնելու հմտու-
թիւն, որոնք ամեն քաղաքացու պարտականութիւններն
են կազմում», էջ 15—16.

Ափսոս նիւթ.

3. ՊՐՕՓ. Ի. ԲԵՐԴԵՆԻՎՈՂ. Նոր պետութեան վերա-
ընդմուտը ղէպի կրօնը. ռուս. թարգ. Գ. Ալթունսան.
խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի. 1902. Ալէքսանդ-
րապօլ.

Մինչև այժմ մենք սովոր էինք հալերէն գրքերի ճակա-
տին դրոշմուած տեսնել՝ հեղինակութիւն կամ թարգ-
մանութիւն (Փիլիպոսեանցի) և հրատարակութիւն
(Մարտիրոսեանցի). այս գրքովը մի նոր երևութ է հանդէս
բերում. նրա կազմի վրայ գրուած է՝ «ուրսերէնից թարգմա-
նեց Գէորգ Ալթունեան, խմբագրութեամբ Ս. Տիգ-
րանեանի»: Մէկի թարգմանութիւնը լոյս է տեսում մի
ուրիշի խմբագրութեամբ. արդեօք խմբագրութիւն գա-
ղափարն ինչ մտքով է գործածուած. նիւթի ընտրութիւնն
ու մի էջից բաղկացած ծանօթութեան գրեւն է խմբագրու-
թիւն, թէ խմբագրողը սրբադրել է բուն թարգմանութիւնը:

Նրկու ղէպըունն էլ գաղափարը համակրելի չէ. եթէ մէկը շնորհք և կարողութիւն ունի մի գիրք թարգմանելու, պէտք է կարողանալ և նիւթն ընտրել ու մի ծանօթութիւն (լառաջաբան) գրել. իսկ եթէ նա այնպէս պէտք է թարգմանէ, որ առանց ուրիշի սրբագրութեան չի կարող գիրքը տպագրուել, աւելի լաւ կլինի, եթէ բոլորովին չթարգմանէ:

Գրքուկի լառաջաբանի տեղը բռնող ծանօթութիւնից երևում է, որ պ. խմբագրողն է ընտրել նիւթը, բայց տեսէք թէ Խնչ է ասում իւր ընտրութեան վերաբերմամբ. «Թարգմանութեան համար պրօֆ. Բերդնիկովի այս բրոշուրը ընտրելու պատճառը այն չէր, որ մեր կարծիքով այս լաւագոյնը լինէր նոյն խնդրին վերաբերեալ գրականութեան մէջ.— ոչ էլ այն, որ մենք համաձայն լինէինք գիտնատոր (?) հեղինակի անձնական համոզմունքներին...» Խմբագրողն ուրեմն ընտրում է մի նիւթ, որ ոչ լաւագոյնն է և ոչ էլ իւր անձնական համոզումներին համապատասխանող, բայց ինչո՞ւ է ընտրում— որովհետեւ «...մեր նպատակն էր այս ղէպըում— մի հանրամատչելի գրուածք հրատարակել»: Եւստ բարի, ալը էլ ընդունենք. մի գրուածք կարող է լաւագոյնը չլինել, կարող է չհամապատասխանել ընտրողի համոզմունքներին, բայց և այնպէս հանրամատչելի լինել. սակայն Խնչ է նշանակում «հանրամատչելի» — պարզ է; հանրամատչելի նշանակում է ընդհանուրին, ամենքին մատչելի, ախրնքն ամենքը կարող են կարդալ և հասկանալ. Բայց հանրամատչելի գաղափարը չա՞րաբերական դա՞ղափար է. մի նիւթ կարող է մի ազգի կամ ժողովրդի համար հանրամատչելի լինել, իսկ մի ուրիշ ազգի կամ ժողովրդի համար բոլորովին մատչելի չլինել. Տիգրանեանը համոզուած է, որ մի գրուածք ընտրելով լիսաւորապէս նկարագրուած, շարադրուած են այն դրական կարգերը և օրէնքները, որով պայմանաւորուած և ձևաւորուած են եկեղեցապետական լարաբերութիւնները արդի քաղաքակիրթ ազգերի կեանքում. կարող է հանրամատչելի լինել այժմեան հալ ժողովրդի համար, դարձեալ չենք առարկի, թէ և առ սակաւն մի խոշոր թիւրքմացութիւն կլինի ալըպիսի համոզմունքը:

Բանաւք գրքուկը և ընթերցողի հետ միասին շարունակելու համար հանրամատչելի նիւթից. սկսենք հենց առաջին երեսից. «Նորոգում եմ Զեր բարեմիտ ուշադրութիւնը այս

խնդրին ալն լուսով, թէ նա աւելորդ չի լինի Ձեր կըրթուած հողու հետաքրքրութեան և Ձեր ուշադիր վերաբերման դէպի արդի արեւմտեան Եւրոպայի ազգերի եկեղեցական հասարակական կեանքի երևութները...:

Երջենք երկրորդ էջը. «Նոր պետութեան գլխաւոր բնորոշ գծերն ընդունուած են անձնաւորութեան ազատութիւնը և քաղաքական իրաւունքների ու պարտականութիւնների մէջ քաղաքացիների հաւասարութիւնը: Անձնաւորութեան ազատութիւնն արտալայուսում է մարդու հողեր և մարմնաւոր բնութեան ուժերի և ընդունակութիւնների գործադրութեան ինքնորոշման մէջ»:

Մի փոքր առաջ գնանք. «Պետութիւնը հրաժարում է որևէ կերպ աջակցելու եկեղեցական պատիժները ի կատարածելու, ազատ թողնելով իւրաքանչիւրին հնազանդուել կամ չհնազանդուել ալդ պատիժներին» էջ. 10 — «Երջապէս դաւանութեան ազատութիւնը պետութեան անվտանգութեան վնաս չպէտք է բերէ: Պետութիւնը չի կարող թող տալ, որ ազատութեան ծածկութի տակ անհնազանդութիւն քարոզէին պետական օրէնքների և օրինաւոր իշխանաւորների կարգադրութիւնների» էջ. 11 — «Կրօնական ընկերակցութիւնների ծագման վերաբերմամբ եղած սահմանափակումները, որոնք կախում ունին դաւանութեանց ցատկութիւնից, կարող են լինել նույն տեսակի ինչպիսիներէ որ են թարկուած է մասնաւոր դաւանանքի ազատութիւնը»: էջ. 12 — «Որովհետև օրէնքի պռաջ բոլոր կրօնական ընկերակցութիւնները հաւասար են, նոր պետութիւնը իրան պարտաւոր է համարում նոցա՝ նից իւրաքանչիւրի համար իւր ունեցած իրաւունքներից խաղաղ օգտուելը ապահովելու պաշտպանել վերաւորանքներից» էջ. 15 — «Մասնաւոր իրաւակցութիւններից ամենակարևորը — ամուսնութիւնը կանոնաւորում է բացառապէս պետութիւնից, որ ամուսնութեան համար դնում է իւր քաղաքացիական ձեւը — ինքն է որոշում ամուսնադրութեան և ամուսնալուծութեան օրինաւորութեան պայմանները» էջ 17 —:

Թէև բաւական է, բայց էլի թերթենք գրքոյկը և բանանք պատահած էջը. «Երկրորդ՝ քանի որ պետութիւնը ճա-

նաչում է եկեղեցու իւր ներքին շրջանում ունեցած ինքնօրինակութիւնը, ապա եկեղեցական կեանքին օրման ներք պետութեան աչքում էլ ստանում են ինքնակախ (?) օբյեկտիւ իրաւունքի նշանակութիւն, միայն թէ ոչ պետութիւնից դրուած նեղ ու խիստ մտքով, ալլ դործող պետութեան թողաութեամբ, հանրային շարակցութեանց մի առանձին շրջանում, որ վայելում է իւր ներքին կարգը բարեկարգելու իրաւունակութիւնն»։ էջ 59-60։

«Այս գերմանական օրէնքն այդ քահանայացուներին պարտաւոր է համարում, որ նոքա պետական Համալսարաններից մէկում լսեն», էջ 69— «Պէտք է նկատել, որ օրէնքի պահանջը իսպառ որոշման ձեւի նկատմամբ արդէն դիպչում է զգալի կերպով եկեղեցական կարգապահութեան»։ էջ 74։

«Այդպիսի արգելաններն (?) չեն կարող 3 ամսից անցնեն», էջ 75—։

«Կառավարութիւնը պահանջում է, որ սեղանի սպասաւորները («լակէյները» ?!) աղօթեն պետութեան բարեկեցութեան և բարօրութեան համար»։ էջ 94։

«Որովհետեւ... ուստի մենք ամենալուրջ կերպով առջարկում ենք, քահանայանութեան և կրօնի, որ առաջուպ ըողոր տարբերութիւնները և ամեն տեսակ մասնաւոր վէճերն ու թշնամութիւններն ալժմուանից ընդ միշտ վերջանան»։ էջ 97—։

«Պետութիւնը եկեղեցուց բաժանելու սիստեմը, իբրև տեղական բնակչութեան մի երևութ, պարզ է, որ անպալման նշանակութեան շարակցութիւնը չի կարող ունենալ»։ էջ 101—։

Բաւական է ընթերցող, որքան օգտուեցանք այս հանրամատչելի գրքուկից։

4. Գիւղատնտեսական գրադարան № 1 ՎԱԶԻ ՄԵԱ-ԿՈՒԹԻՒՆԸ կազմեց Կոստանդին Մելիք-Շահնազարեանց. պատկերազարդ. Կրատ. Մ. Արամեանցի, Թիֆլիս, 1902 զ. 1 ըուք.

Մեր երկիրն իւր կլիմայական բնական լատիւթիւններով աշխարհիս բարեբեր մասերից մէկը լինելով, աշխատաւոր